ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/190

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.11.2018թ. թիվ 27/26-3/21941-18 գրությամբ «Հրաբուխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 26.11.2018թ. թիվ ԴՎԱ/4654 գրության հիման վրա, 30.11.2018թ. թիվ 27/26-3/21941-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Հրաբուխ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Հրաբուխ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հրաբուխ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 03.12.2018թ. թիվ 14 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ ՊՆ կարիքների համար փայտե վառարանների գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) և համաձայն գնահատող հանձնաժողովի 31.10.2018թ. թիվ 3 արձանագրության, ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

12.11.2018թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից էլ. փոստով Ընկերությունը ստացել է ծանուցում Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Ծանուցումը ստանալուց հետո՝ Ընկերությունը 13.11.2018թ. ՀՀ ՊՆ-ի գնումների համակարգող Ա. Մաղաքյանին բանավոր դիմել է վերը նշված ծածկագրով պայմանագրի նախագծի 4.2 կետի պարզաբանման համար, նա պատասխանել է, որ անհրաժեշտ է 2 ժամից հետո զանգել և ինքը պարզաբանելուց հետո կպատասխանի: Պատասխան չստանալուց հետո Ընկերությունը 13.11.2018թ. գրավոր դիմել է Ա. Մաղաքյանին, որպեսզի գրավոր պարզաբանի պայմանագրի նախագծի 4.2 կետը: Հաջորդ օրը Ա. Մաղաքյանը բանավոր տեղեկացրել է (հեռախոսով), որ Ընկերությունը մինչև Ընթացակարգին մասնակցելը պարտավոր էր պարզաբանել 4.2 կետը, միևնույն ժամանակ տեղեկացրել է, որ պետք է Ընկերությանը զրկեն 1-ին տեղից և գրություն գրեն ՀՀ ֆինանսների նախարարությանը սև ցուցակում ներառելու համար: Նույն բանավոր ձևով (հեռախոսով) Ընկերությունը պատասխանել է, որ մինչև 4.2 կետը գրավոր չպարզաբանվի, Ընկերությունը որպես պայմանագրի կողմ, որակավորման փաստաթղթերը չի ներկայացնելու: 15.11.2018թ. էլ. փոստով Ընկերությանը ուղղորդել են Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված կարգով պարզաբանումը պահանջելու և տրամադրելու կարգը և նորից Ընկերությանն անհանգստացնող հարցին պարզաբանում չեն տվել:

Այս բոլոր փաստաթղթային քաշքշուկը և 4.2-րդ կետի անորոշ լինելը Ընկերության համար հիմք հանդիսացավ փաստաթղթերը չուղարկելու համար:

19.11.2018թ. էլ. փոստով Ընկերությունը ստացել է գնահատող հանձնաժողովի թիվ 4 որոշման արձանագրությունը, որի հիման վրա Ընկերությունը գրություն է ուղարկել հանձնաժողովի նախագահի կոնտակտային տվյալները տրամադրելու և սույն արձանագրության 1.1. և 1.2 կետերի վերաբերյալ Ընկերության առարկությունները հանձնաժողովի նախագահին ներկայացնելու համար: Նորից 21.11.2018թ. Ընկերությանը էլ. փոստով պատասխանեցին, որ հանձնաժողովի կողմից կայացված որոշումների հետ համաձայն չլինելու դեպքում Ընկերությունը կարող է օգտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով նախատեսված կարգով բողոքարկելու իրավունքից: 27.11.2018թ. Ընկերությունը ստացել է հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրությունը, որի համաձայն՝ Ընկերությունը զրկվել է առաջին տեղից: Դրանից հետո 30.11.2018թ. հեռախոսով Ընկերությունը դիմել է գնումների բողոքարկման բաժին (011289324 հեռախոսահամարով), բողոքարկման գործընթաց սկսելու պարզաբանման վերաբերյալ: Հաջորդ աշխատանքային օրը՝ 03.12.2018թ. ստացվել է գրություն սույն ընթացակարգը սկսելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/190 ընթացակարգի շրջանակներում 05.12.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.11.2018թ. թիվ ԴՎԱ/4654 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար փայտի վառարանների գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 6 մասնակիցներ, այդ թվում՝ «Հրաբուխ» ՍՊԸ-ն:

«Հրաբուխ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: 12.11.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման միջոցով առաջին տեղ

զբաղեցրած մասնակցին առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, սակայն սահմանմված ժամկետում Ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է «Հրաբուխ» ՍՊԸ-ի հայտը մերժել, միաժամանակ, Ընկերության տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/190 ընթացակարգի շրջանակներում 05.12.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/190 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/190 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Հրաբուխ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.10.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Հրաբուխ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 12.11.2018թ. Armeps համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Հրաբուխ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերով նախատեսված փաստաթղթեր:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.11.2018թ. թիվ 27/26-3/21941-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 26.11.2018թ. թիվ ԴՎԱ/4654 գրությունը և կից փաստաթղթերը, «Հրաբուխ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի,

ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Հրաբուխ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.10.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Հրաբուխ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 12.11.2018թ. Armeps համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Հրաբուխ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ ***առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

«Հրաբուխ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Արձանագրում եմ, որ Ընկերությունը, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սահմանված կարգով ծանուցվելուց հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գտնում եմ, որ «Հրաբուխ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ

օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված այն դիրքորոշմանը, որը առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո Ընկերությունը դիմել է գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով պարզաբանում տրամադրել Ընթացակարգի հրավերի վերաբերյալ, ապա հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակիցն իրավունք ունի ***հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ*** գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.11.2018թ. թիվ 27/26-3/21941-18 գրությամբ «Հրաբուխ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06920276) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Հրաբուխ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ